

Արձանագրություն №1/2018-2019

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2018թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 65-ը (վաթսունհինգ):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկ. գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան):
2. Ֆակուլտետի ղեկանի, ամբիոնի վարիչի մրցութային ընտրության՝ ֆակուլտետային գիտխորհուրդների որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
3. Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2017թ. հարցման արդյունքների մասին (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
4. 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկ. ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
5. «ԵՊՀ ներքին կարգապահական կանոններում» փոփոխություններ կատարելու մասին (զեկ. անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Ա. Թադևոսյան):
6. ԵՊՀ «Մասս մեդիա» գիտակրթական կենտրոն կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի և առաջարկություն ներկայացնելու մասին (զեկ. ԱԿԻԱ վարչության պետ Ա. Ա. Թադևոսյան)
7. Ընթացիկ հարցեր

7.1. Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսներ Ա. Գրիգորյանի, Ա. Դարբինյանի և Ն.

Ստեփանյանի հեղինակած «Deepdive into Mathematics» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարություն միջնորդելու մասին:

7.2. Զեկուցում. Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի՝ Հայոց ցեղասպանության արխիվում կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Հայագիտական հետազոտությունների գիտաշխատող, թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Լ. Սահակյան):

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին. - ԵՊՀ գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին: Գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյանը ներկայացրեց ժամանակացույցը: Հարցեր չհնչեցին:

Որոշեցին. - Հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

2. **Լսեցին.** – Ֆակուլտետի ղեկանի, ամբիոնի վարիչի մրցութային ընտրության՝ ֆակուլտետային գիտխորհուրդների որոշումների հաստատման մասին: Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին ֆակուլտետի ղեկանի և ամբիոնի վարիչի պաշտոնների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Հավակնած պաշտոնը
1.	Բալայան Պավել Բորիսի	Ռուս բնաստիության ֆակուլտետի ղեկան
2.	Գևորգյան Էմիլ Սոսի	Կենսաբանության ֆակուլտետի ղեկան
3.	Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի	Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան

Ամբիոնի վարիչի հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Հավակնած պաշտոնը
1.	Թոչունյան Արմեն Համբարձումի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ
2.	Ստեփանյան Ալբերտ Անդրանիկի	Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Աբրահամյան Սամվել (նախագահ)
2. Սահակյան Անահիտ
3. Հովհաննիսյան Միշա

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 65 անդամներից 62-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս. Աբրահամյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի հավակնորդներ				
1.	Բալայան Պավել Բորիսի	59	3	0
2.	Գևորգյան Էմիլ Սոսի	59	3	0
3.	Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի	60	2	0
Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներ				
4.	Թոչունյան Արմեն Համբարձումի	59	2	1
5.	Ստեփանյան Ալբերտ Անդրանիկի	57	4	1

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Ընտրված ղեկանների, ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ԵՊՀ ֆակուլտետի ղեկանի և ամբիոնի վարիչի մրցութային ընտրության պաշտոնների տեղակալման մասին ընթացակարգերի:

3. **Լսեցին.** – Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2017թ. հարցման արդյունքների մասին: Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը նշեց, որ 2017թ. հարցումներին մասնակցել է 1929 շրջանավարտ՝ նախորդ տարվա՝ 2016թ. 2594-ի համեմատ: Բակալավրիատի շրջանավարտ հարցվածքների 66.8 տոկոսը ցանկություն է հայտնել շարունակելու ուսումը ԵՊՀ-ում, մինչդեռ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ այդ ցուցանիշը կազմել է 29.5 տոկոս: Մասնագիտությամբ աշխատելու մասին հարցմանը դրական է պատասխանել հարցվածների 24.5 տոկոսը: Ա. Գրիգորյանը ներկայացրեց կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների, ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների, ԵՊՀ-ի միջավայրին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգը ըստ շրջանավարտների գոհունակության միջին գնահատականների: Դրամի առկայությունը գնահատական ստանալու հարցում հարցին դրական են պատասխանել հարցվածների 1.3 տոկոսը (բակալավրիատ) և 1.1 տոկոսը (մագիստրատուրա): Մասնավոր պարապմունքների առկայության հարցին դրական պատասխան են տվել հարցվածների համապատասխանաբար 2.9 և 0.7 տոկոսները: ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը գերազանց է եղել հարցվածների 51 տոկոսի մոտ, լավ՝ 39.4 տոկոսի մոտ, բավարար՝ 7.3 տոկոսի մոտ, անբավարար՝ 1.1 տոկոսի մոտ:

Արտահայտվեցին: Հարցումների օբյեկտիվության վերաբերյալ ՈւԽ նախագահ Դ. Ափոյանի հարցին, Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ իր դիտարկումներով հարցումների 70-80 տոկոսը արտացոլում է օբյեկտիվ պատկերը՝ ավելացնելով, որ առցանց հարցումները չլինելու պարագայում կրթության որակը միտում կունենա ցածրանալու: Սովորող անդամ Ս. Սողոյանը հայտարարեց, որ հաճախ բողոքներ է լսում ուսանողներից հարցումների պարտադիր լինելու, հարցումներին չմասնակցելու պարագայում դիպլոմ չստանալու մասին: Ա. Գրիգորյանը ճշգրտեց, որ խոսքը ոչ թե դիպլոմի, այլ նրա հավելվածի մասին է և որ հարցումները բացառապես կամավորության հիմունքներով կազմակերպելու պարագայում մասնակցությունը կլինի շատ ցածր, ինչն էլ օբյեկտիվորեն չի արտացոլի առկա հիմնախնդիրները: Ա. Գրիգորյանը առաջարկեց Ս. Սողոյանին և այլ ցանկացողների մասնակցել հարցին նվիրված առաջիկայում նախատեսվող քննարկումներին: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանն առաջարկեց հրապարակել հարցումների արդյունքները: Ա. Գրիգորյանն ասաց, որ իրավական խնդիր չլինելու պարագայում պատրաստ են հրապարակել դրանք: Այս առնչությամբ արհկոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանը նկատեց, որ անձնական տվյալների գաղտնիության մասին նորմերի խախտում թույլ չտալու համար անհրաժեշտ է դասախոսների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերում սահմանել հարցումների արդյունքների հրապարակման վերաբերյալ համաձայնություն տալու մասին կետ: Ռեկտոր Ա. Միմոնյանը հավելեց, որ, հարցումներն, անշուշտ, օգտակար են կրթության որակի բարելավման տեսանկյունից և որ հարցումների արդյունքների հիման վրա քանիցս չեն երկարացվել որոշ դասախոսների հետ կքնվող աշխատանքային պայմանագրերը: Ա. Միմոնյանն առաջարկեց պրոռեկտոր Ա. Գրիգորյանին շահագրգիռ

բոլոր կողմերի հետ քննարկել բարձրացված հարցերը, իսկ գիտխորհրդին՝ հաղորդումն ընդունել ի գիտություն:

Որոշեցին. - ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2017թ. հարցման արդյունքների մասին Ա. Գրիգորյանի հարցումն ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.** - 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը հայտնեց, որ առկա են 53 կրթաթոշակներ, որոնցից 6-ի արտահամալսարանական ֆինանսավորման են: Ժամհարյանը հավելեց, որ հավակնորդների ներկայացման վերաբերյալ կրթական ստորաբաժանումների գիտական խորհուրդների համապատասխան որոշումներն առկա են:

Որոշեցին. – հաստատել 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

5. **Լսեցին.** - «ԵՊՀ ներքին կարգապահական կանոններում» փոփոխություններ կատարելու մասին: Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Թադևոսյանը նշեց, որ հիմնական փոփոխությունները վերաբերում են վարչական և գիտական համակազմերի աշխատաժամանակների կրճատմանը, ինչը բխում է վերադաս իրավական ակտերից: Վարչական համակազմի համար առաջարկվում է օրվա աշխատաժամանակ սահմանել՝ երկուշաբթի-հինգշաբթի օրերին՝ 9:15-ից 17:00, ուրբաթ օրերին՝ 9:15-ից 16:45՝ շաբաթական սահմանելով 36 աշխատանքային ժամ: Գիտական համակազմի աշխատանքային ժամաձավալն առաջարկվում է սահմանել 20 ժամը: **Արտահայտվեցին:** Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Ա. Սաղյանը հարց ուղղեց Ա. Թադևոսյանին, թե գիտական համակազմի աշխատանքային ժամաձավալի կրճատումը չի՞ ազդի արդյոք ՀՀ ԿԳՆ գիտալետկոմի կողմից հատկացվող ֆինանսավորման ծավալների վրա, ինչին Ա. Թադևոսյանը պատասխանեց, որ ոչ, քանի որ ֆինանսավորումը տրվում է ըստ թողարկված արդյունքի և ոչ ըստ դրա վրա ծախսված աշխատանքային ժամաքանակի: Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանն առաջարկեց կանոններից հանել 68-րդ կետը, որը դասաժամի սկիզբն ու ավարտը դողանջող զանգով ազդարարելու մասին դրույթ էր պարունակում: Նշված առաջարկություններն ընդունվեցին: Ձեռնպահ քվեարկեց 1 անդամ:

Որոշեցին – հաստատել Ա. Թադևոսյանի և Ա. Ալեքսանյանի առաջարկած փոփոխությունները:

6. **Լսեցին.** – «ԵՊՀ «Մասս մեդիա» գիտակրթական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին: ԱԿԻԱ վարչության պետ Ա. Թադևոսյանն առաջարկեց, Հանրային հեռուստաընկերության կողմից կենտրոնի ֆինանսավորումը դադարեցնելու, ինչպես նաև շատ քիչ թվով դիմորդներ լինելու հիմքով, առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ դադարեցնել նշված ստորաբաժանաման գործունեությունը:

Արտահայտվեցին: ՈւՄ նախագահ Դավիթ Ափոյանը դիմորդների քչությունը կրթական ծրագրի որակով պայմանավորված լինելու մասին հարց բարձրացրեց, ինչին ի

պատասխան ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ պատճառը դրանում չէ, քանի որ նախ՝ կենտրոնը հազեցած է նորագույն տեխնիկայով և սարքավորումներով, երկրորդ՝ այնտեղ դասավանդում են ճանաչված, արհեստավարժ մասնագետներ: Որոշումն ընդունվեց 61 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Որոշեցին. - «ԵՊՀ «Մասս մեդիա» գիտակրթական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնել:

7. Ընթացիկ հարցեր:

7.1. Լսեցին. - Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսներ Ա. Գրիգորյանի, Ա. Դարբինյանի և Ն. Ստեփանյանի հեղինակած «Deepdive into Mathematics» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարություն միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ աշխատանքը քննարկվել է ինչպես ամբիոնում, այնպես էլ ռոմանագերամանական բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում, և դրա՝ որպես բուհական դասագիրք հաստատվելու հարցն արժանացել է դրական գնահատականի: Նույն հարցում դրական երաշխավորություններ են ներկայացրել համալսարանական և արտահամալսարանական լեզվաբանության մասնագետներ, ինչպես նաև ԵՊՀ ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի վարիչը: Ա. Միմոնյանն առաջարկեց դրական ընթացք տալ ռոմանագերամանական բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդությանը՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսներ Ա. Գրիգորյանի, Ա. Դարբինյանի և Ն. Ստեփանյանի հեղինակած «Deepdive into Mathematics» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարություն միջնորդելու մասին:

Որոշեցին. - Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսներ Ա. Գրիգորյանի, Ա. Դարբինյանի և Ն. Ստեփանյանի հեղինակած «Deepdive into Mathematics» աշխատանքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

7.2. Լսեցին. - Ջեկուցում Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի՝ Հայոց ցեղասպանության արխիվում կատարված աշխատանքների մասին: Հայագիտական հետազոտությունների գիտաշխատող, թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Լ. Սահակյանը գիտական խորհրդին ներկայացրեց թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ Անի Սարգսյանի հետ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվում կատարած կարևոր հետազոտական աշխատանքը, որի արդյունքները խիստ կարևոր նշանակություն կարող են ունենալ ինչպես Հայոց ցեղասպանության վերաբերյալ հետազոտական, այնպես էլ հրապարակային, գործնական գործունեության առումներով: Գիտական խորհրդի անդամները իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին բանախոսին և շնորհակալություն հայտնեցին կատարված ծավալուն ու դժվար աշխատանքի համար:

Որոշեցին. - Լ. Սահակյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

7.3. Լսեցին. - գերմաներենի ամբիոնի վարիչի գործունեության առնչությամբ ուսանողի կողմից ՈւԽ-ին ներկայացրած բողոքի մասին: ՈւԽ նախագահ Դավիթ Ափոյանը ընթացիկ հարցերի թվում առաջարկեց լսել հետևյալ խնդրի մասին. ռոմանագերամանական բանասիրության ֆակուլտետի ուսանողը բողոքում է առ այն, որ գերմաներենի իր դասախոս, գերմաներենի ամբիոնի վարիչ Յու. Գաբրիելյանը սուբյեկտիվ մոտեցմամբ է իրենից վերցրել քննությունը՝ հարկադրելով նրան մասնավոր պարապմունքներ վերցնել

իր կնոջից, որը նույնպես դասավանդում է նույն ամբիոնում: Մասնավոր պարապմունքի վարձավճարի՝ ուսանողի համար անընդունելի լինելով պայմանավորված՝ վերջինս պարապմունքներ է վերցրել այլ մասնագետի մոտ՝ մատչելի գնով, ինչը, ըստ ուսանողի, առաջ է բերել Յու. Գաբրիելյանի գայրույթը և ազդել քննության վերահանձնման ընթացքի վրա՝ հանգեցնելով անբավարար գնահատականի: Դ. Ափոյանն առաջարկեց գիտական խորհրդին՝ գնահատական տալ նշված դեպքին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը, ընդգծելով, որ դեպքն արժանի է համակողմանի և մանրակրկիտ քննության և որ մինչև այդ քննության արդյունքները ճիշտ չի համարում հասցեական գնահատական հնչեցնել, այդուհանդերձ ասաց, որ ուսանողին մասնավոր պարապմունքի դրդելու արատավոր պրակտիկան ԵՊՀ-ում, ցավոք, դեռ չի վերացել: Ա Միմոնյանը խիստ դատապարտեց նման ցանկացած դրսևորում և հանձնարարեց պրոռեկտոր Գրիգորյանին շտապ կազմել հանձնաժողով (ընդգրկելով ֆակուլտետի ղեկանին, ամբիոնի աշխատակցի, ՈւՄ ներկայացուցչի) և քննելով դեպքը՝ արդյունքները զեկուցել ռեկտորին:

Որոշեցին. – հաստատել Ա. Միմոնյանի առաջարկը՝ դեպքի քննության հանձնաժողով կազմելու մասին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Մողմոնյան

15.10.2018թ.